

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հովիվին Տարած Աշխատութեանց
Յունուար 1, 1987 - Դեկտեմբեր 31, 1987

Ս. Պատարագի Մատուցում Եիքակո42, Վոքիկըն 1.

Մասնաւոր ծամերգութիւններ .. Եիքակո 18, Արեւազալի, Հսկումի եւ աւուր պատշաճի

Մկրտութիւն 1

Ամուսնութիւն 0

Յուղարկաւորութիւն 7

Հոգեհանգիստ 25, Փափաքուած 36 ընտանիքներու կողմէ.
ասոնցմէ զատ Հոգեհանգստեան պաշտօն կատարուած է, Մայրերու Օրուան առթիւ բոլոր հանգուցեալ Մայրերու, Հայրերու Օրուան առթիւ բոլոր հանգուցեալ Հայրերու, Երգչախումբիս տարեդարձին առթիւ Ս.Եկեղեցւոյս ծառայած հանգուցեալ Հոգեւորականաց եւ Դպրաց հոգւոյ ի հանգիստ.

Այցելութիւններ Տնօրինէք 14, Հիւանդանոց Եիքակո 8, Վոքիկըն 1.

Ժողովներու Մասնակցութիւն .-

Ժխական Խորհուրդ 11, Երեց Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ 4, Երիտասարդ Տիկնանց Օժանդակ Յանձնախումբ 2, Երեց Երիտասարդաց Կազմակերպութիւն 2, Կիրակնօրեայ Դպրոց 5, Դպրաց Կաս 1, Երգչախումբի փորձեր 3, Ապրիլ 24 ի Հանդիսութեանց Յանձնախումբ 4, Փիքնիքի Յանցնախումբ 6.

Բացառիկ Ձեռնարկներ եւ հանդիպումներ.-

Սոր Տարւոյ առթիւ հաւաքոյթ, կազմակերպուած Երեց Տիկնանց Յանձնախումբի կողմէ, Փետրուար 15, Վալանթայն Օրուան առիթով ծաշկերոյթ, Գէնտրլ Լայթ ծաշարանին մէջ. Փետրուար 28, Քարեկենդանի Խրախճանութիւն կազմակերպուած Երիտասարդ Տիկնանց օժանդակ Յանձնախումբի կողմէ. Մեծ Պահրի ընթացքին ամէն կիրակի քարոզներ տրուած են դասախօսութեան կերպով, Անգլերէն եւ Հայերեն լեզուներով. Մարտ 11, Արքուհիներու Օր տօնուած երեք համայնքներու մասնակցութեամբ Արքոց Յովակիմ եւ Աննա Եկեղեցւոյ մէջ, ի Փայլոս հայթգ. Ապրիլ 4, Ս.Ներսէս Դպրեւանքի ուսանողներէն Սարկաւազ Մայքրլ ֆրնտրքեան դասախօսութիւններ տուաւ Աւետարանի եւ Աւագ Շաբթուայ մասին ու յաջորդ օր ալ Կիրակիի արարողութեանց մասնակցեցաւ Ս. Եկեղեցւոյս մէջ. Ապրիլ 20, Զողաքէս հիւրաբար անցնող Գեր. Տէր Սիոն Արքզն. Արքեպիսկոպոս Մանուկեանի ի պատիւ տրուած ծաշին մասնակցած եմ Ս. Եկեղեցւոյս անունով. Ապրիլ 24 ի հանդիսութիւնը կատարուեցաւ 3 համայնքներու մասնակցութեամբ Ս.Եկեղեցւոյս մէջ ծաշ եւ յայտագիրով մը, օրուայ հիւր խօսողներն էին Սթանլի Լ.Տէյվիս եւ Բրոֆ. Շաւարշ Թօլէկեան. Մայիս 12 Երեքշաբթի օր Լուսերան Ճէներալ հիւանդանոց ընդունուցայ եւ մնացի մինչեւ Մայիս 21, Հինգշաբթի, Ս. Պատարագ մատուցանեցի Կիրակի Մայիս 24 ին.

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանաց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Մայիս 30 երբ չափազանց կազմակերպած էր Պովիլինկ բարձր մր. Մայիս 31 կիրակի միջին արեւմուտքի երիտասարդները հանդիպում մը ունեցան եւ նախաճաշեցին Եկեղեցւոյ սրահին մէջ. Յունիս ամսուան մէջ երեք դպիրներ Ուրարակիր Բաֆֆի հազարեան, Արի Չալըշքան եւ Յովսէփ Ութաշ մէկ շաբաթուան համար նիւ Եօրք ուղղարկուեցան մասնակցելու համար Ս.Ներսէս Աստուածաբանական Վարժարանի դասընթացներուն, Յունիս 26 այցելութիւնն ընդունեցինք 30 հոգինոց խումբի մը որ կուգային Gospel Center Missionary Church South Bend Indiana-էն գլխաւորութեամբ իրենց հովիւին Տօթթ. Թովմաս Սրրֆիի, հարցումներուն առ ի պատասխան տեղեկութիւններ տրուեցան Հայաստանեայց Առաքելական Ս.Եկեղեցւոյ եւ Ս.Գրիգոր Լուսավորչի մասին. Օգոստոս 3, Երկուշաբթի երեկոյեան Ալպանեան Ս.Նիկողայոս Եկեղեցւոյ հովիւին հրաւերով մասնակցած եմ երեկոյեան աղօթածոդովի մը միատեղ առնելով ուրարակիր դպիր Բաֆֆի հազարեանը եւ Աւետարան կարդացած եմ հայերէն լեզուով. Սեպտեմբեր 13 խաչվերացի տօնին Ս.Պատարագէն յետոյ քարոզի տեղ բացատրութիւն տրուեցաւ թէ Հայերէն եւ թէ Անգլերէն լեզուով թէ ինչպէս պարտինք կենալ Եկեղեցւոյ մէջ, երբ ոտքի ելլել եւ երբ նստիլ հարկաւոր էլարարողութեանց ընթացքին. Սեպտեմբեր 21, Սրտի գործողութեան համար ընդունուեցայ Սէնթ Անթրնի հիւանդանոց Կրոս Փօէնթ, ինտիանա ուր մնացի երեք շաբաթ, ապազինման շրջանս անցուցի տանս մէջ. Նոյեմբեր 15-ն սկսայ մասնակցիլ առաւօտեան ժամերգութեանց, նոյեմբեր 29 կիրակի առաջին անգամ ըլլալով Ս.պատարագ մատուցանեցի: Բացակայութեանս ընթացքին Եկեղեցին միշտ բաց մնացած է շնորհիւ Ս.Եկեղեցւոյ նուիրուած եւ բարեջան սարկաւազներուն եւ դպրաց դասու անդամներուն որոնք իրենց իրաւասնութեանց սանձաններուն մէջ կատարած են կիրակնօրեայ ժամերգութիւնները. Հոկտեմբեր ամսուան մէջ Հայաստանէն Լիսիցեան Զոյրերը, երգահանդէս մը տուին Եկեղեցւոյ սրահին մէջ հոժ բազմութեան մը ներկայութեան: Նոյեմբեր 12-14 մեր մէջ ունեցանք Արժ. Տ.գառնիկ Զհնյ. Հալաճեանը որ հրաւիրուած էր Երզնխումբի Երդ. տարեդարձի հանդիսութեան անդամով, Արժանապատիւ Տէր Հայրը մատուցանեց Ս.Պատարագ եւ քարոզի տեղ բացատրութիւն Եկեղեցւոյ մէջ գործածուած զգեստներու եւ անոնց գործածութեան մասին, օրինակ հանդիսանալով իր իսկ զգեստաւորումով: Ասկէ յետոյ ծաշ տրուեցաւ Սրահին մէջ կոկիկ յայտագրով մը: Դեկտեմբեր 27 կիրակի Ս.Ստեփաննոսի տօնին առթիւ Ս.Պատարագէն ամիջապէս յետոյ յատուկ արարողութիւն մը կատարուեցաւ եւ բացատրութիւն տրուեցաւ նախասարկաւազ եւ Առաջին Մարտիրոսի մասին, որուն յաջորդեց փոքրիկ ընդունելութիւն մը սրահին մէջ:

Վերոյիշեալ աշխատութեանց եւ հանդիպումներէն զատ պաշտօնիս բերումով ներկայ գտնուած եմ այլազան հաւաքոյթներու եւ ձեռնարկներու որոնց կարգին, մասնակցած եմ Հայ գամբի բացման ի Միլվօքի, Հարսանիքի արարողութեան մասնակցած եմ Ս.Յակոբ Եկեղեցի ի Էվէնսթըն, մասնակցած եմ քոյր Եկեղեցիներու փոքնիքներուն, տարուան ընթացքին դպիրներ Արի Չալըշքանի եւ Յովսէփ Ութաշի սպասարկութեան եւ սարկաւազութեան վերաբերեալ դասախօսութիւններ տուած եմ փորձերով միասին. Զողաքէս հիւրաբար անցնող Եկեղեցականներու ընկերակցած եւ հիւրասիրած եմ զիրենք տանս մէջ. Անգլերէն լեզու դասընթացներու հետեւած եմ ըստ կարելոյն ինչ որ կը շարունակուի Wright College-ի մէջ նորեկներու յատուկ դասընթացով մը ամէն շաբաթ օր:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի Հայաստանեայց

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CHURCH

6700 WEST DIVERSEY AVENUE, CHICAGO, ILLINOIS 60635 TEL: (312) 637-1711

Այսու կը կցեմ խորհին երախտագիտութիւններս հանդէպ ծուխիս յարգելի անդամներուն, պատուարժան ծխական խորհուրդիս, եւ Եկեղեցւոյս բոլոր կազմակերպութիւններու վարչութեան եւ անդամներուն իրենց տուած հասկացողութեան եւ համբերութեան համար, որուն կարիքն ունիմ:

Տեղեկագիրս պատրաստուած է ծուխիս տարեկան ծխական ժողովին համար:

Փետրուար 7, 1988
Շիրակո - ԻԼԼԻՆՈՅ

Վահրամ Բհնյ. Հագարեան

